ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

“.....” ..... 2019թ. N.....

«Կառուցողական երկխոսության հանձնառություն»
ծրագրի ղեկավար Հայաստանի ՔՀԿ-ների կոալիցիաների
կառուցողական երկխոսության ցանցի քարտուղարության
համակարգող ՀԽ պետահիրավական հանձնաժողովի
նախագահ Կ. Զադոյանին

Ի պատասխան Ձեր 28.07.2019թ.
№02/20 գրության

Հարգելի պարոն Զադոյան

Ս. թ. հունիսի 12-ին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում (այսուհետ՝ Նախարարություն) էներգետիկայի և բնական պաշարների ոլորտի 2020-2022թթ. ՄԺԾԾ հայտի (այսուհետ՝ Հայտ) շուրջ անցկացված հանրային քննարկման (այսուհետ՝ Քննարկում) արդյունքում Հայաստանի կայուն և թափանցիկ էներգետիկ զարգացմանն ուղղված ՔՀԿ (այսուհետ՝ ՔՀԿ) կոալիցիայի (ներկայացուցիչ՝ Ա. Պասոյան)կողմից պատրաստված հաշվետվության (այսուհետ՝ Հաշվետվություն) վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

Հայտը Նախարարության կայքում տեղադրվել է 2019թ. մայիսի 10-ին http://www.minenergy.am/page/409 հղումում, տեղադրվելուց հետո հղումը մեր կողմից փորձարկվել է, խնդիրներ չեն առաջացել և անցած ժամանակաշրջանում հղումը չաշխատելու վերաբերյալ որևէ ահազանգ (այդ թվում նաև ՔՀԿ կոալիցիայի ներկայացուցիչ Ա. Պասոյանի կողմից) չի եղել:

Հայտում ներառվել են Նախարարության ապարատի պահպանման, վարկային և դրամաշնորհային ծրագրերը (թվով 8), ինչպես նաև՝ «Ընդերքի ուսումնասիրության, օգտագործման և պահպանման ծառայություններ» ու «Ռադիոակտիվ թափոնների կառավարում» ծրագրերը և նոր նախաձեռնություններ՝ ընդերքօգտագործման իրավունքով տրամադրված տեղամասերի կոորդինատների ճշգրտման, չգազիֆիկացված համայնքներում արևային ջրատաքաղուցիչ և ֆոտովոլտային համակարգերի (ՖՎ) տեղադրման և չգազիֆիկացված համայնքների գազիֆիկացմանն ուղղված ծրագրերը:

Տեղեկացնում ենք, որ Նախարարությունը հանդիսանանում է բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչ՝ վառելիքի, էներգետիկայի, բնական պաշարների և ջրային տնտեսության ոլորտներում և իր միջնաժամկետ ծախսային ծրագրերի հայտերի հետ միասին պարտավոր է ներկայացնել նաև ՀՀ մարզպետարաններից ստացված՝ նշված ոլորտներին վերաբերող հայտերը: Համայնքների արևային համակարգերի գծով ներկայացված հայտերը (շուրջ 1 մլրդ դրամ) հանդիսանում են չգազաֆիկացված համայնքներում որպես խնդրի լուծման այլընտրանքային տարբերակ և ուղղված են համայնքների բնակչության կենցաղային պայմանների բարելավմանը, ինչպես նաև բնակչության կողմից սպառվող էլեկտրաէներգիայի և դրամական միջոցների խնայողությանը: ՀՀ մարզպետարաններից ստացված ֆոտովոլտային և գազաֆիկացման ծրագրերին ուղղված հայտերը, ինչպես և նախորդ տարիներին, չեն ներառվել 2020թ. ՄԺԾԾ ճշտված չափաքանակներում (ՀՀ ֆինանսների նախարարության 14.06.2019թ. №01/8-5/9787-2019 գրություն):

Հաշվետվության մեջ նշված՝ «Էներգետիկ հաշվեկշռի մշակման», «2-րդ ԷԳԾ մշտադիտարկման (2017-2018թթ)» և «3-րդ ԷԳԾ (2019-2020թթ) մշակման» ծրագրերը (այսուհետ՝ Չներառված ծրագրեր) Հայտում ընդգրկված չլինելու վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

. Էներգետիկ հաշվեկշռի մասով հայտնում ենք, որ այն որպես ՀՀ օրենսդրությամբ պարտադիր իրականացման պահանջ ամրագրված է «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենքում 2016 թվականից: Նախարությունն օրենսդրական պահանջի ամրագրումից ի վեր ՀՀ ենթաօրենսդրական կարգավորումների պահանջներով սահմանված ժամկետներում և ձևաչափով համակարգել և ապահովել է 2015, 2016, և 2017 թվականների էներգետիկ հաշվեկշիռների մշակման աշխատանքները ու ներկայացրել ՀՀ ԿԱ վիճակագրական կոմիտե՝ հրապարակման, ընդ որում կատարված աշխատանքների համար չներգրավելով ՀՀ պետական բյուջեից միջոցներ: Հաշվեկշիռների մշակման աշխատանքները ֆինանսավորվել են Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի և ՄԱԶԾ Հայաստանյան գրասենյակի կողմից

իրականացվող տարբեր դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում, իսկ իրականացնող կազմակերպություններ են ընտրվել՝ «Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնը» (2015թ.) և «Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ (2016 և 2017թթ): Նախարարությունը 2018թ. էներգետիկ հաշվեկշռի մշակումը նույնպես նախատեսում է իրականացնել այլ դոնոր կազմակերպությունների միջոցների հաշվին, ուստի այն չի ներառվել Նախարարության ՄԺԾԾ առաջարկներում: Ինչևէ, չի բացառվում, որ հետագա տարիների էներգետիկ հաշվեկշիռների մշակումն իրականացվի ՀՀ պատական բյուջեի միջոցներով, որի վերաբերյալ կտեղեկացվի համապատասխան ընթացակարգերով սահմանված ժամկետներում և ձևաչափով:

. Հաշվի առնելով, որ 2-րդ էներգախնայողության գործողությունների ծրագրի մշտադիտարկման (այսունետ՝ Մոնիտորինգ) և 3-րդ էներգախնայողության գործողությունների ծրագրի (այսունետ՝ ԷԳԾ-3) մշակման աշխատանքների իրականացումը չունի կապիտալ բնույթ, ՀՀ պետական բյուջեի վրա լրացուցիչ բեռ չառաջացնելու նպատակով Նախարարությունը նախատեսում է Մոնիտորինգի և ԷԳԾ-3 մշակման աշխատանքներն իրականացնել այլ աղբյուրների միջոցների հաշվին՝ ներգրավելով էներգախնայողության և էներգաարդյունավետության իրականացման ոլորտում մասնագիտացված տարբեր դոնոր կազմակերպություններ: Միևնույն ժամանակ քանի որ, 2018թ. էներգետիկ հաշվեկշիռը դեռևս գտնվում է մշակման փուլում (պաշտոնական հրապարակումը նախատեսվում է 2020թ. հունվար ամսին), ապա Մոնիտորինգի արդյունքների արժանահավատությունից ելնելով Նախարարությունը նպատակահարմար է համարում սկսել ԷԳԾ-3-ի մշակումը 2018թ. էներգետիկ հաշվեկշռի ցուցանիշների պաշտոնական հրապարակումից հետո:

Հայտնում ենք, նաև որ Նախարարության ներկայացուցիչները բազմաթիվ հարթակներում մասնագիտական հանրությանը ներկայացրել և շարունակում են ներկայացնել էներգախնայողության և էներգաարդյունավետության ոլորտում ՀՀ-ում վարվող քաղաքականության առաջնահերթությունները, ինչպես նաև իրենց իրավասությունների շրջանակներում մշտապես պատրաստ են քննարկելու էներգախնայողության և էներգաարդյունավետության իրականացման ոլորտում մասնագիտացված ՀԿ-ների հիմնավորված և փաստարկված առաջարկներն ու դիտողությունները:

Միաժամանակ, Հաշվետվության «Ընդհանուր դիտարկումներ քննարկման հետ կապված» բաժնի.

1) 1-ին կետի դիտարկումները համարում ենք ոչ կոռեկտ և իրականությանը չհամապատասխանող:

Քննարկմանը ներկա էին Հայտում ներառված Ծրագրերի գծով Նախարարության համապատասխան ստորաբաժանումների ղեկավարները, որոնք ապահովել են Ծրագրերի կազմման և ամփոփման աշխատանքները: Քննարկման

ընթացքում հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների (փոքր ՀԷԿ-երի միության նախագահ Ն. Նահապետյան և լրատվական ծառայության ղեկավար Ա. Մայլյան, ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի անկախ փորձագետ Է. Արզումանյան) կողմից Հայտում ներառված ծրագրերի վերաբերյալ որևէ հարցադրում չարվեց: Հարցերը վերաբերվել են համակարգի խնդիրներին, և դրանց վերաբերյալ տրվել են համապատասխան պարզաբանումներ:

Ձեր ներկայացուցիչ Ա. Պասոյանը հետաքրքրված էր միայն Հայտում Չներառված ծրագրերով, որոնց վերաբերյալ տրվեց համապատասխան մեկնաբանություն:

2) 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերում նշված «ժամանակի սահմանափակության», «ռեսուրսների», «վերապատրաստվելու» և «գերատեսչության կողմից բյուջեների պատմողական մասը վաղորոք ներկայացնելու» դիտարկումներին վերաբերյալ, տեղեկացնում ենք, որ 2019թ. բյուջետային գործընթացի յուրաքանչյուր գործողությունները և ժամկետները սահմանված են ՀՀ վարչապետի 22.03.2019թ. «ՀՀ 2020թ. բյուջետային գործընթացն սկսելու մասին» N289-Ա որոշմամբ:

X _____

Հարգանքով՝

Հ. Վարդանյան

Կատարող՝ Սիրանուշ Համբարձումյան
Ֆինանսատնտեսագիտական վարչություն

Ζτιπ. (011) 52-51-99